

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՎՆԵՐ

Պոլիտիկոս համար	
Saurկիսի	10 Ֆր.
Վեցամսեայ	5 »
Արտասահմանի համար	
Saurկիսի	12 »
Վեցամսեայ	6 »
Ամերիկայի համար	
Saurկիսի	2.50 ֆր.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆԻՍԻՎ ԿՆՆՈՒՄ	

Պատկերակա սոցիալական համար 40 սանթիմ. հ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. ե. երեքին անգամ անգլաներու համար 20 010 գեղջ կըլլայ:

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկեյ  
Խնայողութեան հասցեին

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.  
Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք հս չեն տրուիր

Պոլիտ. 10 ՍԱՆԹԻՄ

Պոլիտ. 10 ՍԱՆԹԻՄ

Ս. Մանդեան ստեղծու պատճառով յառաջիկայ շաբաթ օր «Շարժում» չի հրատարակուիր:

ՇԱՐՋՈՒՄ 1900Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փետրուար 1ին կօկսի «Շարժում»-ի երրորդ տարեշրջանը հետեւեալ պայմաններով:

Պոլիտիկոս համար saurկիսի	12 Ֆր.
» » վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար saurկիսի	15 »
» » վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար saurկիսի	3 օսլա
» » վեցամսեայ	1.50 »
Պոլիտիկոս համար ձեռքի 15 սանթիմ	
Արտասահմանի » »	20 »

Բաժնեգրիները կանխիկ են: Ամէն բաժանորդ իր հասցէին հետ մէկտեղ պէտք է բաժնեգրինը զրկէ, ապա թէ ոչ «Շարժում» չի զրկուիր:

Մեր գործակալներէն կը խնդրուի հաղորդել մեզ՝ չը վճարող բաժանորդներուն անունները, որպէս զի այդ մարդոց թերթերը դադրեցնենք:

ՄԵՐ ԲԱԺ. ՆՈՐԿՆԵՐՈՒՆ

«Շարժում»-ի երկրորդ տարեշրջանը աւարտուելուն մէկ ամիս մնաց. մեր այն ամէն բաժանորդները որոնք մինչեւ հիմա չեն վճարած, թող բարեհաճին զըրկել իրենց բաժնեգրիները:

Փետրուարի 1ին պիտի սկսի երրորդ տարեշրջանը. նախորդ տարուան պարտքերը չը վճարուին «Շարժում» չը պիտի զրկուի: Փետրուարին պիտի յայտարարուին նաեւ բոլոր այն բաժանորդներու և գործակալներու անունները, որոնք խիզճ ունին հայ թերթի մը վարձքը օւտելու:

ՆԱՄԱԿԱՆՈՒՓ

Ամերիկայի գործակալներէն կը խնդրենք որ շտաբով մեզ հասցունեն զբաժնեգրը, հաշիւները և բաժանորդներու ցանկը. նշանակելով նաեւ թէ որ ամսէն են սկսած «Շարժում» ստանալ:

ԾՆՈՒՆԴԻ ԱՌԹԻԻ

Ծնունդը մարդկութեան մեծագոյն դարազրկ խնեւրէն մէկն է. որովհետեւ, բարքերու, մտածումներու, ըմբռումներու մեծագոյն յեղափոխական մը. ինչպէս էր Աստուածորդին, ծնաւ այդ օրը:

Ինչպէս ամէն յեղափոխութիւն, նոյնպէս Յիսուսին ալ արինով գծեց իր ճամբան, և իր նպատակին հասնելու համար, ստիպուեցաւ անթիւ զոհեր տալ:

Կարծիր արիւնը, Բէթղէմէ մի անմեղ և անզիտակ մանուկներէն սկսելով՝ սկսաւ վազել. և որ կանգ չառաւ Իոզղոթայի բարձունքին վրայ, հիմնադիրին արեան հետ, այլ զանազան ուղիով իրենց զոհողութիւնները Պաղեստինի սահմաններէն դուրս տարածուեցաւ. և ճիւղաորուեցաւ այն ատենի ծանօթ ամբողջ քաղաքակրթութեանը մէջ:

Ծնունդի ատենը, իր Աստուածային զոհարարութեամբ ըստած կրօնական օրինակներէն զատ կրնայ նաեւ առաւ և անսպառ ներշնչարան մը ըլլալ նաեւ մեր աշխարհիկ կեանքի և երկրաւոր գործառնութեանց համար:

Մէկգի թողունք Յիսուսի բոլոր այն կիզատու հետեւողները, որոնք անոր խօսքն ու կեանքը իրենց առաջնորդ բռնած, մարդկութեան կոնաղը հեծած կը քերթեն ամբողջ կաշին, և անոր արիւնը կը ծծեն:

Մէկգի թողունք այն Քրիստոնեայ պետութիւնները որոնք Յիսուսի անունով կը շարունակեն իրենց արիւնոտ սուրբ պատգմել անմեղ ու աւար ժողովուրդներու վրայ. յաղորդ տալու համար իրենց անյազ կիրքերուն և անկուշտ ցանկութիւններուն:

Եւ վերագառնանք Աւետարանի այն առաջին շրջանին, ուր Յիսուսի առաջին աշակերտները, խանդավառ հետեւողները, կը նետուէին ամենէն մութ և ամենէն փշոտ ճամբաները. իրենց Տէրովը կենսատու խօսքը ստորածելու, և իտարի մէջ հեծող ժողովուրդներու երկնային լոյսը ծածանցեցնելու:

Յիսուսի կեանքը և Աւետարանի այդ առաջին շրջանն է որ մէջտեղ կը հանէ, Քրիստոնէութեան ամբողջ սրբութիւնն ու մեծութիւնը. եւ ինչ որ կրնայ մեր թերահաւատները ուժովցնել, և վհատները սրտապնդել, օրինակն է այն անհամար մարտիրոսներուն, նահատակներուն ու կոյսերուն, որոնք երկնքի արքայութենէն աւելի Յիսուսի անձին ու վարդապետութեանը փառած, և անոր կարմիր արիւնէն գինովցած, աներկիւզ կը նետուէին բոցերու մէջ, գաղանձէնու բերանն ու դահլիճներու առջեւ:

Եւ եթէ Քրիստոնէութիւնը, կրցաւ իր առջեւ խոնարհած տեսնել աշխարհակալող զուխները, և գնել իր անշիջ կնիքը մարդկային քաղաքակրթութեան վրայ. այդ կը պարտի ոչ թէ զիտուններու, քաղաքագէտներու և շըրջահայեացներու վախկոտ ու տատամտող հաշիւհրուն, այլ իր անկեղծ, տղէտ, բայց աներկիւզ զոհերուն:

Յեղափոխութիւնը, ըլլալ կրօնական, ըլլալ աշխարհիկ, զրատուններու, շրջահայեացներու, սեղմ և սահմանափակ թիւէն աւելի պէտք ունի ժողովրդական ստորին խաւերու մեծազոր խլրտումներու ահաբեկիչ շարժումին:

Մեր երեկուան յեղափոխութիւնն ալ, իր ոչխարամիտ, կոյր, հետեւող, բայց անխաղախ ու անձնուէր հերոսներու բանակովը աւելի յոյս աւելի լոյս կը ներշնչէր. մինչդեռ այսօր, իր հաշուած ու զսպուած թափովը, իր գունատ ու անհոգի երանգովը յռատեանութեան կը մատնէ զմեզ:

Շրջահայեաց ըլլանք ու լրտեսող օրուան քաղաքական ուղիւթիւնը, բայց չի խղրենք մեր մէջ ու չի վհատեցունենք բարձրաթիւի իանդամութիւնը մեր յեղափոխական գաղափարին, որով միայն պիտի կրնանք տապալել ամէն պատուար. նոյնիսկ մեր երկիւղած լոկացիներուն հաշիւները:

Որովհետեւ քաղաքականութիւնն ալ իր սխալներն ունի, և քաղաքագէտներն ալ շատ անգամ յանկարծակի կուգան, ինչպէս եկաւ Անգլիականը ալ մը Պօէրներու ճարպիկ ու ճատուկ շարժումներու առջեւ:

Թիւնն ալ իր սխալներն ունի, և քաղաքագէտներն ալ շատ անգամ յանկարծակի կուգան, ինչպէս եկաւ Անգլիականը ալ մը Պօէրներու ճարպիկ ու ճատուկ շարժումներու առջեւ:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ  
Ֆիլիպե

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՕԼԻՍ, 1/12 Յունվ.

Հին տարին եւ ժողովրդ զարե գէշ կերպով վերջացան Թուրքիոյ համար:

Արդէն գրած էի թէ ձերբակալութիւնները շատցած են. հիմա ալ կաւելցնեմ թէ բանտերը լիք լեցուցն են Բամագանի առթիւ. այնչափ լեցուցուց որ պատկերու սեղ չէ մնացիր:

Այս ատեն առթիւ բանտերը կը լեցուին նախ կրօնական պատճառով մը: Ամէն ծովը լուծող էթէ բունուի, բանա կը նետուի. եւ նոն կը մնայ մինչեւ պայրամ: Աս երեւոյթը աշխարհի մէջ ամէն տեղեր կրկնուեր է. կրօնքը ըլլալով բոնակալութեան ամենէն զօրեղ նեցուկը, բանակալութեան կողմն ալ կը պաշտպանուի:

Սուլթանի համար անհրաժեշտ է որ ամէն հպատակ կոյր կրօնասէր, ֆանատիկոս ըլլան, այլ խօսքով՝ էշ ձեռն, էշ մեռնիւն. Հպատակներու աղիտութիւնը եւ անթիւ աղքատութիւնը բոնակալութեան երկարատեւութեան միակ հիմքն են. հարուստ ժողովուրդ մը խիստ կարճ ժամանակի մէջ կը լուսաւորուի. իսկ լուսաւոր ու հարուստ հասարակութիւն մը ստակացնել, բայց ընել էթէ չըսեմ անհնար գէթ չափազանց զժուարին գործ մըն է:

Բամագանի առթիւ բանտարկութիւններու աճելուն երկրորդ պատճառն ալ «Սըրգայի-Շէրիֆ»ն է. Բամագանի 16ին Սուլթանը պարտաւոր է երթալ «Սըրգան» համբարներու, Աս միակ օրն է որ Սըրգան բանտարկեալը, սովորութենէ ստիպեալ, կը համարձակի թողուլ պալատը եւ մինչեւ Պօլիս անցնել: Աս երկար ճամբորդութեան համար մէկ երկու ամիս առաջ պատրաստութիւններ կը տեսնուին: Անցնելիք ճամբաներու ամէն տուններուն ու խանութներուն վրայ խիստ, բայց զաղտնի հսկողութիւն կը կատարուի:

Ղալաթիոյ կամուրջին երկաթեայ սիւները արդէն հիմնաւորապէս նորոգեցին: Կամուրջի տակը ամսէ մը ի վեր է որ ոստիկաններ կը կենան:

Ճամբաները երեք են . առաջինը Պէ- շիքթաշէն ծովով Սիրքէճի, երկրորդը Տըմա-Պաղչէի, Դալաթիայի ու կա- մուրջի ճամբով Սիրքէճի, երրորդն Երջուղէն Բանկալիթի, Բերայի, Դալաթիայի ճամբով Սիրքէճի :

Այս վերջին երեք սարիները Հա- մա ծովու ճամբան կը գերազանէր, սինանք այս սարի ո՛ր ճամբով պի- տի երկայ :

Այս ճամբորդութեանը առթիւ ա- մէն կապակներն անձ կը բռնուի եւ ծակը կը խորուի, մինչեւ Բամա- գանի 16ը միայն պայմանաւ : Անկէ ետքն ալ, Սուլթանը՝ իրը ողորմած հայր, կը հրամայէ րանտարկեալ- ները ազատ արձակել . . .

Բանտարկութիւն ու աքսոր՝ անա Պոլսոյ ամենօրեայ նորութիւնը : Հինգշաբթի եւ շաբթի օր մը չանց- նիր որ գէթ 15—30 հոգի հայ ու թուրք աքսոր չերթան :

Վիճակներն առ է :

Թրքական բարձր շրջանները խիստ անհանգիստ են . ամէն ոք կը կարծէ թէ Սուլթանի փախած փեսան Մահ- մուտ փաշան Երիտասարդ Թուրքե- րու կուսակցութեան պաշտօն պիտի անցնի, նոր հոգի պիտի ներշնչէ ու զօրացնէ զանի :

Կը կարծուի թէ Սուլթանը խիստ անհանգիստ է այս մասին եւ ամէն միջոց ի գործ կը դնէ իր փախած փե- սան եւ դարձնելու :

Ես քիչ մը աւելի թերահաստ եմ թէ Երիտասարդ Թուրքերու, այդ վաճառուող հոգիներու մասին, թէ Տամատ Մահմուտ փաշայի : Հաւատ չունիմ առ կուսակցութեան եւ առ անձերուն վրայ :

Օրուան խնդիրը Ռուսիոյ պատե- րազմական պարտին յետամնաց մա- սերուն վճարումն է : Ռուսիա չտա- պով կը պահանջէ 99ին իրեն հասնե- լիք 170.000 ոսկին : Բ. Դուրք ուս պետական կրկնակի գիմուսներուն պատասխանեց որ 1900ի յունուար

13ին պիտի վճարէ : Է . . . ստակ որ չիկայ ուսկի՞ց պիտի վճարէ . առ է խնդիրը :

Ռուս դեսպանը պարտքը ուղած պահուն ուշադրաւ դիմում մըն ալ ր- րաւ . թոյլտուութիւն ուղից Պաթու- մէն մինչեւ Տրապիզոն երկաթուղիի գիծ մը շինելու համար :

Երկաթուղիներու եւ այլ մեծ ձեռ- նարկներուն մենաշնորհը այսօր թուրքիոյ մէջ միակ գերմաններու համար կը յաջողի : Անգլիոյ պատ- մական եւ Ռուսիոյ կարծօրեայ ազ- րեցութիւնները Բ. Դրան վրայ ար- դէն կոտորուած են . միակ ազգեցիկը, միակ բարեկամը գերմանն է մի- ցեր :

Նոր տարին ու նոր դարը դէշ պա- րագութիւնով մը սկսաւ Թուրքիոյ գանձարանին համար : Բամազանի առթիւ պաշտօնեաներուն ամսական մը տալու չափ անգամ ստակ չը կար գանձարանին մէջ : Աս անգամ ալ գերման պանքան դեկտ. 11ին իր տեսուչ Սիմէնի ձեռքով 200.000 օսմ. ոսկիի փոխառութիւն մը րրաւ Սուլթանի վարչութեան, որով գէթ ամսական մը վճարուեցաւ պաշտօն- եաներուն : Այդ գումարը արուեցաւ սասը ամիսէն վճարելու պայմանով եւ 7 Օ/10 տոկոսով : Բայց վստահ ենք որ սասը ամիսը տասնեակ տարիներ պիտի դառնան ու առ գումարն ալ թրքական հսկայական հանրային պարտոց վրայ պիտի բարդուի :

Սուլթանի անձնական ետվերե- րէն երկու հոգի ալ անցեալ օր կծիկը դրեր են : չոքեաւ մը մտնելով Մարսիլիա են անցեր : Կերեւայ ի՛նչ Համիտի ասաղը քիչ մը ծոեր է . իր շրջապատողները կը ձգեն ու կը փա- խին :

Ապուշնե՛ր, առափ մարդ փախ- չելու փոխարէն մէկ հոգի մը զոհուի աւելի աղէկ չէ՞ :

Աս գիշերուընէ նոր տարի է եւ ես, իրր Շարժումի 5—6 ամսուան թըղ-

թակից՝ թոյլ կուտամ շնորհաւորել անոր վճարող եւ «ձրի» ընթերցողնե- րուն նոր-տարին :

Առ առթիւ քանի մը ցանկութիւն- ներ կուզեմ յայտնել, սրտիս վրայ ծանրացած են, ըսեմ, թերեւս քիչ մը թեթեւեայ :

Հայոց ազգին փրկութիւն կը ցան- կամ . առ ամենէն առաջին ու մեծ բաղձանքս է :

Սուլթաններուն՝ ստակուտ : Օրմանեանին՝ քիչ մը բարոյակա- նութիւն եւ զգացում դէպի հայուն ցաւերը :

Մեր հարուստներուն քիչ մը խելք որ օգնեն մեր փրկութեան գործին : Հայ յեղափոխականներուն քիչ մը աւելի անձնագոհութիւն, որ երկրի մէջ գործելու նախապատուեն արա- սահմանի պոռոտախօսութեան :

Այս չափը բաւ է . աւելի ցանկու- թիւններ ունիմ, բայց չեմ ուզեր յայտնել չեղարեւու պատճառով : Շ. ՈՐՀԱՒՈՐ ԿՈՐ ՏԱՐԻ :

ԲԱԺ

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ը

«Փառք ի բարձունս Աս- սուծոյ, եւ յերկիր խա- զաղութիւն, ի մարդիկ հանութիւն» : Դուկ. Բ. 14

Քսան դար առաջ, գիշերուան մը մութը իջած պատած էր՝ ամ- բողջ Պաղեստինը, որուն համա- տարած լուծեանը մէջ Խարայէլ խոր ու ծանր քուն մը կը քաշէր : Բայց աւելի ծանր, աւելի խոր էր այն քունը որ մարմնէն աւելի Խարայէլի սրգոց միտքը կըն- դարմացնէր, կամբը կը ջլատէր եւ սիրտը կը քարացնէր . Հոռ- մէական արծիւն էր այդ, որ իր լայն թեւերուն տակ պարփակած էր Քսաննու երկիրը :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԿԻՊՏԱԿԱՆ ՔՐՈՑԻԿ

Օրմանեան-Տատեան դաւակցու- թիւնը ժամանակէ մը ի վեր հզօր պաշտպան մը գտած է Եգիպտոսի մէջ յանձին Պօղոս բաշա Նուպարի . որ վերջապէս իր գոյնը ցոյց տուաւ շաբաթ մը առաջ : Հազիւ վերադար- ձած Եւրոպայէն՝ նա զբաղեցաւ ան- միջապէս Սղեքսանդրիոյ մերազնեայ օրինադան երիտասարդութեան մե- ծագոյն հարուածը տալ՝ արմատապէս բնաջինջ ընել նկրտելով, ազգային շրջանակին մէջ, կարգ մը կարեւոր անօրինութիւններ, որոնք արդիւնք էին ազգային բարձր ու նախանձա- կընդիք ոգի է մը մղուած նորածիլ, գիտակից շարժման մը՝ յետարան ու- նենալով Սահմանադրութիւնը, Պատ- մենք սակայն իրեն իրենց կարգին ցոյց տալու համար նաեւ պատասխա- նասուութեան բաժինը, բաշա այս ազգակեր ջանադրութեան մէջ, կարգ մը հացկատակներու, որոնք տեղւոյս ազգ. գործերը մ'նօջող ընկերու կտան- դէն բռնուած են միջոց :

«Շարժում»ի ընթերցողներուն ծա-

նօթ է արդէն թէ Սղեքսանդրիոյ թաղ. խորհուրդը՝ հակառակ ժողո- վրդեան միահամուռ բողձանքին, փորձ փորձեց արգիլելու համար, ամբան, միջինի մը գումարումը՝ Լահէյի դեսպանախորհուրդին խնդ- րազիր մատուցուելու նպատակաւ : Սրբ. կազմակերպուած միջինի երկ- րորդ օրն իսկ խորհրդոյ անդամներէն փոխ-ատենապետ Կամարական (է- ֆէնտին) եւ Տիար Փրիզոր Մեղթօն- եան իրենց հրաժարականը կը յղեն ի Բարիք Պօղոս բաշա, յայտարարե- լով թէ իրենք հակառակ գտնուած են սոյն որոշման, եւ թէ ժողովրդեան բազմութեան զէմ չը գնելու եւ ան- հաճոյ դէպքերու ծնունդ չի տալու համար միայն չեզոք կենալ ստիպուեր են : Սոյն երկու Տիարք կը յաւելուն իրենց հրաժարագրին մէջ թէ միջո- ջը կայ եղբր արգիլելու, միջինի կազմակերպութիւնը, եթէ թաղ. խորհրդոյ միւս անդամք եւս համա- կարծիք գտնուած ըլլային, բայց թէ որ դժբաղդարար Տիար Ա. ձեւակեր- ձեան ստանորդ եղեր է եւ թէ կեր- պով մը թաղ. խորհուրդն ալ միջին- կի կազմութեան գործակից նկատուեր է : Բաշան վերադարձին՝ բոլոր այս դաւերը աւելի շեշտակի կուղուին Տիար ձեւակերպեանի զէմ, որ միակ ազգասէր անձնուարժութիւնն է աւե- ղական ազգ. վարչութեան մէջ, ժո- ղովրդական զէմք մը, զօրաւոր պաշտ-

պան մը ազգ. անձեւումիւնի իրա- ւունքներու, որուն զէմ կսկին սարգել ամենագոհելի խաղ մը . թաղ. խորհուրդը լուծուած կը ձե- ւացնեն կարգ մը համաման հրաժա- րումներով, որոնց բնական նպատա- կը կըլլայ Տիար ձեւակերպեանի հրա- ժարեցումը, Դեկտեմբեր 13ի երեք- շաբթի օրը Պօղոս բաշա՝ Բէյիդեան պէյերու բնակավայրը կը հրաւերէ Տիար Մեղթօնեան, Պ. Օհանեան եւ Ա. Կամարական, ուր կորոշուի վե- րադառնալ Եգիպտական վաղմի սո- վորութեան՝ առանց ժողովրդեան ձայնին ու քուէին, թաղ. խորհուրդ մը ձեւացնելու : Սոյն ժողովին մէջ «եւ Եգիպտոսի հայոց միջինի ին կամ» կըսէ Պօղոս բաշա, ոչ ոք կրնայ խառնուիլ այստեղի գործերուն, այդ Պօղոս եկողնիսր եթէ խոտովութիւն հանելու պատճառ ըլլան աքսորի կուտամ » :

. . . Եւ աւազ իշխանք, մեծ պա- րոնայք ժողովք կազմելով, իրենք իրենց թաղ. խորհուրդ մը կընտրեն երկու Բէյիդեան պէյերու . եւ միւս հրաւիրեալ՝ երեք անձերու՝ անդամա- կցութեամբ, ընդ բարձր նախագա- հութեամբ Պօղոս բաշաի :

Արահամու, Իսահակի եւ Յա- կորի Ասաուածը, Եհօփան, ալ զադրած էր պահպանն ու ա- ռաջնորդն ըլլալէ իր ընտրած ժողովուրդին . ալ չէր լսեր ա- նոնց արեւունը, ալ չէր սիրեր անոնց խուսկիւրը : Չիկար Սով- սէս մը Օգոստոս Փարաունի կաշ- կանդող լուծը խորաակող. չիկար Յեսու մը Աւետեաց երկրին Հրէա- կան գերիշխանութիւնը վերա- հաստատող. չիկար Սամիսոն մը Հուռմէական քաղաքները փշրող ե ոչ Դաւիթ մը, Ս/օնի սրբու- թիւնները այլազգիներու ոտնձը- գութիւններէն պաշտպանող :

Չինակիր առաջնորդներու հետ, պակաս էին նաև ոգևորող հոգի- ները, ներշնչող ու ներշնչող սիրտերը . մարգարէական ոչ մէկ սրտապնդող ձայն կուզար Տիար- ջը կողմէն փրկութեան նոր լոյս մը ցոլացնելու գերութեան խա- ւարին մէջ միջոց աչքերուն առջեւ : Եւ ինչո՞ւ . . .

Որովհետեւ այդ խստապարա- նոց ժողովուրդը մոռցած էր իր Տէրը, մոռցած իր փրկիչն ու Առաջնորդը . և քահանան, զը- պիրն ու փարիսեցիին, ազիտու- թեան ու մութին ծնած ու սնու- ցած այդ կեղծապարիշտ մակա- բայները, ժողովուրդին կուշտին կպած, աւելի ու աւելի կը թանձա- րացնէին այն խաւարը որ անոր հոգին կը պարուրէր և օրէնքի տառական գործադրութեան, և ձէսերու անջինջ ու անարիւն ա- րարողութեանց մէջ կը խեղդէր ամէն ներշնչում, ամէն սղատ ու անկախ մտածում, և շարժում դէպի լոյսն :

Իսրայէլ կը քնանար, կը քնանար գիշերին ու ստրկութեան ծնած խաւարին մէջ, և հասած էր իր վերջնական քայքայումին:

Եւ ահա յանկարծ գիշերուան մթութիւնը կը ճեղքուի, լուսափայլ մարմին մը հոլաթեւ, աստղերու զոգէն վար կը սուղի, և Բէթլէհէմի մտերը, բացաստանի մը մէջ, իրենց հօտերուն հետ հանգչող հովիւներու կաւետէ Տիրոջը Օծեալին, Փրկչին ծնունդը:

Լուսաթեւ հրեշտակներու պար մը կը միանայ աւետարտ հրեշտակին, և ձեռք ձեռքի տուած կը շրջապատեն հովիւներու հօտը, և երկնային ներդաշնակութիւնով մը կը լեցնեն երկիրն ու երկինքը:

«Փառք է բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Հովիւները այդ լուսաշող հանդիսարարութենէն շլացած, և անտուճային երաժշտութենէն զգլխած ու ներշնչուած կըսեն իրարու.

«Եկայք երթիցուք մինչեւ ցրեթղեհէմ և տեսցուք զինչ է բանս այս որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ»:

Ու այդ օրէն ի վեր հաւատաւոր մարդկութիւնը կը հետեւի հովիւներուն, և ամէն տարի Մնունդի գիշերը կը գիմէ նոր Բէթլէհէմը, իր Եկեղեցին, երկրպագելու Աստուծոյ զօրքին որ Տիրամօր գրկաց մէջ կը ճլուրջայ անմեղունակ:

Մեր երանաշնորհ նախնիք որ միշտ Տօներու առաջինն են պա-

հած Մնունդը, իրենց շարականներուն ամենէն ներշնչուածներն, իրենց տաղերուն ամենէն անուշները նուիրած են անոր:

Երբ եկեղեցին, այդ գիշերը կերտններու ու կանթեղներու հազարաւոր լոյսերուն մէջ ողորուն, և ոսկեհոն և արծաթաշող դարձերուն և սպասներուն մէջ ակնախտի, իր կամարներուն տակ կարճագանգէ Խորհուրդ մեծն ու Ով զարմանալին, ինչ որ ալ ըլլանք մենք, սկսպտիկ կամ հաւատացող, նիւթին կպած կամ գաղափարական մը, կը ցնցուինք և թօթուելով պահ մը արտաբերուած զուարթ բոլոր աշխարհիկ մտածումները՝ կընկղմուինք Աստուծոյ զօրքին կատարած գերագոյն զոհողութեան խորհուրդին խորը, որ Բէթլէհէմի մտորէն սկսելով կերկնայ մինչեւ Յորդանանու եզրերը, և անկէ ալ մինչեւ Փոզողթայի բարձունքը:

Մեր յուսահատ հոգիները, որոնք աւաղ այնքան աղմկած են ու մթնցած արիւնի ու արցունքի բռնակոծ ալիքներէ, հրեշտակային երաժշտութեան ելեւէջներովը օրորուն, և անոր լուսաշող շիթերովը ցօղուած կը խլուրջուին, կընդլայնին և կընդգրկեն, թող ըլլայ գիշերուան մը համար միայն, մեծ սկզբունքները:

Ու երբ առտու ըլլայ, ինչպէս Իսրայէլ անդիտացաւ այդ գիշերուան մէջ ծնած մեծ Խորհուրդն, մեղմէ շատերն ալ պիտի մոռնան իրենց բոլոր վերացումները, Խորհուրդին, Երգին իրենց ներքեւ կրկնուցած լոյսը

շուտով պիտի մարի, եսասէր մտածումներու և հաճոյքներու կշտապինդ վայելքին մէջ:

Բայց պիտի գտնուին անշուշտ մարդիկ, որ վարսամի շուսափողի գիծէն առաջնորդուելով, հովիւներու միամիտ ու անսթեւեթ հաւատքին հետ պիտի ունենան մոգերու նուիրաբերող ձեռքերը, և պիտի երթան խոնարհ յարկերու մէջ փնտուել աղքատն և տառապողը:

Եւ իրենց պարտականութեան կատարումովը զոհ, կարող պիտի ըլլան առանց խղճահարութեան կրկնել հրեշտակներու երգը:

«Փառք է բարձունս»...  
Շ Ր Ո Ւ Ս Զ

### ՊԱՌԱՎՏԻՉ ՈԳԻՆ

Արփիար Արփիարեան, զոր «Նարժում» իր հիմնարկութեան օրէն որակեց «Պառակտիչ Ոգի» անունով, կը շարունակէ իր գիւտային գործը, այս անգամ յարձակելով հայութեան ամենէն մաքուր դէմքերէն մէկուն, Պ. Մինաս Չերազի վրայ: Այն պահուն ուր ամբողջ արտասահմանի հայութիւնը իր ձայնը կը միացնէր Չերազի վրայ՝ հայկական դատը ներկայացնելու համար Լահէի վեհաժողովին, բնականաբար Արփիարի քունը կը խռովէր: Հարկ էր ուրեմն այդքան en vue հայ մը արատաւորել, վարկաբեկ ընել: Ու Արփիար փորձեց ընել այդ բանը՝ Միացեալ-Ընկերութեանց վրայ իր «Նոր-Կեանք»-ին մէջ գրած յօդուածներու շարքին մէջ, Չերազը ներկայացնելով իբր

կը մեկնին Հնդկաստան և Աֆղանիստան ուր պիտի կաշառեն ցեղապետները:

Նոյն թերթի վերջին թւոյն մէջ կը կարդանք թէ Պարսկական սահմանազրի ժողովրդեան մէջ հետզհետէ աճեցուն ատելութիւնը կը տիրէ թուրքերու դէմ, ըստ որում պարսիկները (որոնք մահմադականութեան շեղիս յարանուանութեան կը պատկանին) չեն կրնար հանդուրժել իրենց սահմաններուն մէջ ներկայութիւնը Սուլթանի կողմանէ նշանակուած մասնաւոր պատերազմներու, որոնք անժամանակ կերպիւ կուզան վրդովել իրենց հանգիստը, հրաւիրելով զիրենք ընդունիլ սլեյքի դաւանութիւնը, զոր գրկած են տաճկաստանի մահմադականները: Այս ատելութիւնը այնքան յատուկ պայծառ է որ պարսիկները հետզհետէ կը միանան հայերու հետ զօրաւոր հարուած մը տարւելու համար Սուլթանին: Լուր կայ թէ Պաշտիկի սահմանազրեաները վտանգի տակ են հոն համախմբուող պարսիկ և հայերու միաձայն վիճում ու թերութեան ներկայութեամբ:

բաւասութիւնը չեն ճանչնարու ամէն ինչ իրենց մօտօրոյ կընեն, հասոյթներէն սկսելով, ժողովուրդը իրաւամբ չի գիմիր աղօթելու հոն որ այլուս ազգին տունը ըլլայ կը դադրի:

Այս ինքնակոչ խորհուրդը կորուչ Գահիրէի հետ համախորհուրդ, Եգիպտոսի առաջնորդ ընտրել Եգիպտէ կախկոպոս Գուրեան:

Ինչ որ ալ ըլլայ սակայն իրենց որոշումը, Ստամբուղական խնդիրը լուծուած չըլլար զի «բացարձակապէս համազուած ենք թէ Եգիպտէ եւ պիսկոպոսը չը հեռանար Սրմաշէն», ուր անկիւն մեծ սահմանի մէջ ազգին ոգրակար ըլլալու կոչուած է: Կը հաջցնենք սակայն թէ ինչ պէտք կայ առաջնորդի կամ սեղապահի: չէ մի որ բաշան անսայթաք կը գոչէ թէ «ես եմ այս տեղի միւթէվէլլին, ամէն ինչ իմ որոշումէն կախուած է»: Ահա թէ ինչու համար բաշան միացաւ Օրմանեանի հետ ջնջելու համար Իգմիլիկան սրբազանի ընտրութիւնը, զի նորին ամենապատուութիւնը՝ միւթէվէլլիութիւնը և զղաճաւորութեան և ազգային իրաւունքներու պաշտպանութեան մէջ կը տեսնէ միայն:

«Մէմորիալ Տիբլումթիք» ի 3 գլխ-

պատճառ վանի վարժապետանոցին փակման:

Խնդիրը մանրամասնօրէն հոս պարզել երկար ու ձանձրալի կըլլայ, քանի որ Չերազ իր Լ'Առմէնիին մէջ արդէն բաւականէն աւելի ապացուցուց որ ինք ոչ միայն պատճառը չէր եղած յիշեալ վարժապետանոցին փակմանը, այլ և անհեղքելի կերպով հաստատուց թէ այդ հաստատութեան փակմամբը Միացեալ-Ընկերութեանց զոյութիւնը ապահովուած էր:

Պ. Չերազ, իր անուան ու պատուին դէմ եղած այսքան անտեղի ու լպիրշ յարձակումէ մը իրաւամբ սրտմտած, հին ու սոսկալի պարապայ մը երեւան կը հանէ Սրփիարի անցեալ կեանքի մութ գրուագներէն մէկը: Լ'Առմէնիի 1 զեկտեմբեր թիւին «Հայաստան և Կ. Պօլիս» խորագրով յօդուածէն կը քաղենք հետեւեալ մասերը:

«Պ. Միսաք Մանուկեան, Միացեալ-Ընկերութեանց վարչական ժողովոյ անդամ և հասոյթից քննիչ, որ մը մեզ իմացուց թէ Արփիար Արփիարեան ընկերութեան հասոյթներէն 40 ոսկի իւրացուցած էր Կանչել տունի քանցաւորը, որ չը կրցաւ գործն ուրանալ, բայց ինքզինքն արդարացընել կարծեց ըսելով թէ կատար հասոյթից քննիչը և թէ վրէժ լուծելու համար էր որ գրամը ետ չէր խառ: Այս փաստին անսեղութիւնը գիտել սուրինք իրեն, և որովհետեւ լաւ յարաբերութեան մէջ էինք իր հետ, խնդրեցինք որ ետ տայ 40 ոսկին, իր պատիւը փրկելու և ասանկ գայթակղութիւն մը խնայելու համար ընկերութեան, որովհետեւ հասոյթից քննիչը վարչական խորհուրդին իմացուցած էր գործը ինչպէս նաեւ ընկերութեան մէկ քանի

Պօլսէն կը հաղորդուի թէ Սատրազամի որդւոյն ճալիս պէլի եւթադրեալ սպաննիչին զատաւարութիւնը այլեւս անգի չի պիտի ունենայ: Սուլթանը 15,000 ոսկեւոյ շնորհ մը ըրած է Եգիպտոսին, որպէսզի սիրուչը հատցնէ զատական չհետամուտութիւններով, որոնք իրեն ժամանակ կը կը գրաւեն, վնասելով կասալարական զործերը:

Ալպանացիք կը պահանջեն որ ձերբակալուածը ազատ արձակուի և կատաւարութեան ծախքով վերագառնայ իր հայրենիքը՝ անվտանգ հասուցուելով անոր նաեւ կարեւոր գումար մը:

Վերջին պահուն կիմանամ թէ Պօզոս բաշա նուպար Խալիկ ներկայացուցած է ցուցակ մը մէկ քանի «անձնաւորութիւններու» անուանց, որոնց մէջ կերեւին ի մասնաւորի Տիարք Կամսարական Ա. Ե. Տաեղբարց և Պ. Օհանեանի անունները: որոնց համար կը խնդրէ պատուատիճաններ կամ նոյն մասք բարեխօսութիւն մը՝ Սուլթանի մօտ:

Աղեքսանդրիա, 18 զեկտ.

